ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«02» օգոստոսի 2021թ. № 287

ՀԵՆՐԻԿ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի «ժգ» ենթակետով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 31-ի՝ «Հենրիկ Միրզոյանին համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնել շարունակելու թույլտվություն տալու մասին» թիվ 206 որոշումը, հաշվի առնելով, որ 2021 թվականի օգոստոսի 1-ին լրացել է Հենրիկ Միրզոյանի համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը՝ ***որոշում եմ.***

1. 2021 թվականի օգոստոսի 2-ին Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետ Հենրիկ Միրզոյանին ազատել զբաղեցրած պաշտոնից:

2.Աշխատանքային հարաբերությունների ավարտը համարել 2021 թվականի հուլիսի 31-ը:

3.Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ և վճարել:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ.օգոստոսի 2
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«02» օգոստոսի 2021թ. № 288

ԱՐԱՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐԻ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով և 50-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Աշիկ Հովսեփյանի մահից հետո Սպիտակ համայնքի Այգեստան թաղամասում գտնվող անշարժ գույքն ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2021 թվականի հուլիսի 29-ի վկայագրի փոխանցվել է Արարատ Աշիկի Հովսեփյանին, սակայն անշարժ գույքին նախկինում հասցե չի տրամադրվել, հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2021 թվականի հուլիսի 29-ի վկայագիրը և Արարատ Հովսեփյանի ներկայացուցիչ Մարինե Ասատրյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Արարատ Աշիկի Հովսեփյանին ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի փոխանցված՝ Սպիտակ համայնքի Այգեստան թաղամասում գտնվող 0,091 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող շինություններին տրամադրել «քաղաք Սպիտակ, Այգեստան թաղամաս, 1 նրբանցք, թիվ 8» հասցեն:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. օգոստոսի 2
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«02» օգոստոսի 2021թ. № 289

ԱՐՏԱՇԵՍ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՎԱՐՏ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ և 4-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 13-կետի «ա» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի թիվ 1023-Ն որոշմամբ, որ Արտաշես Մանվելի Սարգսյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող, քաղաք Սպիտակ, Ս.Ավետիսյան փողոց, թիվ 60 հասցեում գտնվող 06-006-0519-0022 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,08138 հեկտար մակերեսով հողամասի վրա 2021 թվականին ինքնակամ կառուցել է 170,65 քառակուսի մետր մակերեսով անավարտ բնակելի տուն, որի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18082020-06-0006 վկայականը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, «Գասպար Վեքիլյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման

հաշվետվությունը և Արտաշես Մանվելի Սարգսյանի 2021 թվականի հուլիսի 14-ի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Արտաշես Մանվելի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ քաղաք Սպիտակ, Ս.Ավետիսյան փողոց, թիվ 60 հասցեում գտնվող 06-006-0519-0022 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,08138 հեկտար մակերեսով հողամասի վրա 2021 թվականին ինքնակամ կառուցված 170,65 քառակուսի մետր մակերեսով անավարտ բնակելի տունը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Արտաշես Մանվելի Սարգսյանի սեփականության իրավունքը:

3. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

4. Արտաշես Մանվելի Սարգսյանին.

1) Համայնքի բյուջե վճարել 242 665 ՀՀ դրամ օրինականացման վճար:

2) Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Քարտուղարության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. օգոստոսի 2
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«02» 09.սեպտեմբեր 2021թ. № 290

ԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐԻ ԱԼԹՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետով և 16-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման 3-րդ կետի «ը» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Արշակ Գրիգորի Ալթունյանին պատկանող՝ Վանաձորի խճուղու գտնվող 06-006-0228-0028 կադաստրային ծածկագրով 0,05491 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով հողի հարկի վճարման անդորրագրերը, «Արտյոմ Սաքանյան» Ա/Ձ–ի կողմից տրամադրած անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Արշակ Գրիգորի Ալթունյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել հողհատկացման հիմքերը և օրենքի ուժով ճանաչել Արշակ Գրիգորի Ալթունյանի (ծնված 14.04.1960թ.) սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի Վանաձորի խճուղու վրա գտնվող 06-006-0228-0028 կադաստրային ծածկագրով 0,05491 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «քաղաք Սպիտակ, Վանաձորի խճուղի, թիվ 21» հասցեն:

3. Սույն որոշումից ծագող իրավունքը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. _____
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«02» օգոստոսի 2021թ. № 291

ՄՈՒՐԱՑԱՆԻ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ՝ ԱՂԱՎՆԻ ՌՈՒԲԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՏԻՐԱՊԵՏՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման 3-րդ կետի «ը» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի թիվ 828-Ն որոշմամբ հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (տարածական պլանավորման փաստաթղթերի) բացակայության դեպքերում քաղաքաշինական գործունեության իրականացման և հողամասերի գործառնական նշանակության փոփոխության կարգի 2-րդ կետով, հաշվի առնելով, որ հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2021 թվականի հունիսի 25-ի թիվ 01/111.1/05229-2021 գրությունը, հողի հարկի անդորրագրերը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Աղավնի Ռուբենի Սարգսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի Մուրացանի փողոցի վրա գտնվող, Աղավնի Ռուբենի Սարգսյանի կողմից տիրապետվող, 06-006-0439-0010 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամասից առանձնացված 0,04 հեկտար մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2. Վերականգնել հողհատկացման հիմքերը և օրենքի ուժով ճանաչել՝ Աղավնի Ռուբենի Սարգսյանի (ծնված 17.06.1963թ.) սեփականության իրավունքը Մուրացանի փողոցի վրա

գտնվող 06-006-0439-0010 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասից առանձնացված 0,04 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

3. Սույն որոշման 2-րդ կետում նշված անշարժ գույքին տրամադրել «քաղաք Սպիտակ, Մուրացանի փողոց, թիվ 16» հասցեն:

4. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունը, ծագող իրավունքը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. օգոստոսի 2
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«02» հունվարի 2021թ. № 292

ՀԱՄԼԵՏ ՇԱՀԲԱԶՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի ԹԻՎ 121 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2021 թվականի մարտի 15-ի «Գույքի նկատմամբ իրավունքների (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին» թիվ Մ-15032021-06-0002 որոշումը և «Արսեն Իսահակյան Ռուդիկի» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման ճշգրտված հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Համլետ Ռաֆիկի Շահբազյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Խնկոյան փողոց, թիվ 77 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի ճշգրտված հատակագիծը 0,09722 հեկտար մակերեսով:

2. Սպիտակ համայնքի ղեկավարի 2021 թվականի փետրվարի 24-ի «Համլետ Շահբազյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա գտնվող ինքնակամ կառուցված բնակելի տունը, հարթակը և պարիսպը օրինականացնելու մասին» թիվ 121 որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ.

1) որոշման նախաբանում և 1-ին կետում գրված «11,73» թիվը փոխարինել «10,04» թվով:

2) որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետում գրված «177 780» թիվը փոխարինել «176 318» թվով:

3) որոշման նախաբանում նշված «պարիսպ» բառից հետո լրացնել «ինքնակամ քանդել է անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1131467 վկայականում նշված թիվ 2 և 3 շինությունները» բառերով և թվերով:

3. Սույն որոշման 2-րդ կետով կատարված փոփոխությունները և լրացումները ենթակա են պետական գրանցման:

4. Ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին Համլետ Ռաֆիկի Շահբազյանին համայնքի բյուջեից վերադարձնել ավել վճարված 1462 ՀՀ դրամ օրինականացման վճարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. _____
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«06» օգոստոսի 2021թ. № 293

ՎԱՐԴԱՆ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասով, 110-րդ հոդվածի 1-ին մասով, 130-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Վարդան Սահակյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. 2021 թվականի օգոստոսի 9-ին Սպիտակ համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Սահակյանին ազատել զբաղեցրած պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2016 թվականի հունիսի 13-ին կնքված թիվ 2 աշխատանքային պայմանագիրը:

2.Աշխատանքային հարաբերությունների ավարտը համարել 2021 թվականի օգոստոսի 8-ը:

3. Վարդան Սահակյանին՝ 2021 թվականի օգոստոսի 6-ին Սպիտակ համայնքի ղեկավարի օգնական Արտակ Մաթոսյանի հետ կատարել հանձնման-ընդունման աշխատանքներ և ստորագրել հանձնման-ընդունման ակտ:

4.Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ և վճարել:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ.օգոստոսի 6
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«06» դեկտեմբեր 2021թ. № 294

ԱՐԱՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐԻ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով և 50-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Աշիկ Հովսեփյանի մահից հետո Սպիտակ համայնքի Այգեստան փողոցում գտնվող անշարժ գույքն ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2021 թվականի հուլիսի 29-ի վկայագրի փոխանցվել է Արարատ Աշիկի Հովսեփյանին, սակայն անշարժ գույքին նախկինում հասցե չի տրամադրվել, հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2021 թվականի հուլիսի 29-ի վկայագիրը և Արարատ Հովսեփյանի ներկայացուցիչ Մարինե Ասատրյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Արարատ Աշիկի Հովսեփյանին ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի փոխանցված՝ Սպիտակ համայնքի Այգեստան փողոցում գտնվող 0,142 հեկտար մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել «ք.Սպիտակ, Այգեստան փողոց, թիվ 292» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. դեկտեմբեր 6
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«06» օգոստոսի 2021 թվականի № 295

ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՐՄԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Արման Ավետիսյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ (ծածկագիր 2.1-5) Արման Սերգոյի Ավետիսյանին 2021 թվականի օգոստոսի 9-ին ազատել համայնքային ծառայության զբաղեցրած պաշտոնից:

2. Աշխատանքային հարաբերությունների ավարտը համարել 2021 թվականի օգոստոսի 8-ը:

3. Արման Ավետիսյանին՝ 2021 թվականի օգոստոսի 6-ին Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի առաջատար մասնագետ Արամ Դարչինյանի հետ կատարել հանձնման-ընդունման աշխատանքներ և ստորագրել հանձնման-ընդունման ակտ:

4. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ և վճարել:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. օգոստոսի 6

ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«09» օգոստոսի 2021 թվականի № 296

ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՆԱՀԻՏ ԳՅՈՒԼԱԶՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Անահիտ Գյուլազյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար (ծածկագիր 1.1-1) Անահիտ Գյուլազյանին 2021 թվականի օգոստոսի 11-ին ազատել համայնքային ծառայության զբաղեցրած պաշտոնից:

2. Վերջին աշխատանքային օր համարել 2021 թվականի օգոստոսի 10-ը:

3. Անահիտ Գյուլազյանին՝ 2021 թվականի օգոստոսի 10-ին Սպիտակ համայնքի ղեկավարի պաշտոնակատար Քաջայր Նիկողոսյանի հետ կատարել հանձնման-ընդունման աշխատանքներ և ստորագրել հանձնման-ընդունման ակտ:

4. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ և վճարել:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. օգոստոսի 9
ք. Սպիտակ